ասեն ևս սպահան առաւ. նմանապէս ևս լէկզին զբազում գիւղս և զգաւառս պարսից աւերեաց և զբազում հայս ի սուր սուսերի մաշեաց։ (*Գաբրիել վ. Թեոդուսպոլսեցի առ Միխիթար Աբրահայր, բուին* 1722. *օգս.* 26 [*տեղի?*])։

Դ.

Սամաթիայու սուրբ Գէորգայ ժամն սկսան չինել՝ որ մինչև կատարի, 100 *քսակ հազիւ բաւականանայ ասեն. և այսու եղև վեց ժամ չինեցեալ հրամանաւ այս վէզիրիս. այսինքն աստուածածնայ, լուսաւորչին, պալատու, սուրբ Գէորգայ, Թովղափոյուն, զատրքէօյին. վասն ամենեցուն գնաց ասեն մինչ* 300 *տօրպակ ստակ. և յամենեցուն առնուն զդրամս կամայ և ակամայ*[1]։ (*Պ. վ. Տայի սիմոնեան առ Մի. Աբրայ, բուոյն քրիստոսի* 1722. *յունվարի* 13. *ի Ղալաթիայ*)։

Ե.

Գէորգ վ. ի թոխաթ էր մինչև ցա(յ)ժմ (բայց անընդունակ յուղղափառաց), զի հայք գնա մեծաւ աղաչանօք տարան ի վանքն նորաշէն, և անդ եկաց ժամանակ ինչ, ի մերձակայ աւուրս այլազգիքն այրեցին զվանքն (քանզի ի չինեցմանէն մինչև ցայս վայր պահէին զոխս, նաև կամէին քակտել զՊազարճուխի և Սուրբ Քառասնից ժամն, բայց բազում փողով հազիւ գերծուցին, և հայքն երկու և երեք օր գոնեցին զկրպակսն և զեկեղեցիսն, իբր թէ կամին առնու(լ) զվրէժս ի տաճկաց, և այնոքիկ անմտացան զի վերստին կամին չինել զվանքն։ (*Փ. վ. առ Միխիթար Աբրահայր.* 1723, *Սեպտ.* 11 [*տեղի?*])։

Զ.

Ցարևելից կողմանէ յայտնի ոչ ինչ լուր գոյ. սուս է օրթալխն. բայց ի ծածուկ ասեն թէ պատերազմ ի վերայ սղնաղին հայոց է. ասեն թէ վայրագոյն և փոքրագոյն մասն սղնախին հնազանդեալ են այսու պայմանաւ տալով զհարկ, բայց ոչ զոլով ի մէջ ինքեանց թուրք, յետոյ 6000 *թուրք թողեալ են որպէս պաշտպան զի մի վնասցին յայլոց. բայց զկնի ոմանց աւուրց ձեռք ձգեալ են առ ի կողոպտել զինչս, զորդիս և զկանայս, յետոյ կսկծեալ սիրտն հայոց յանկարծ յառեալ սրակոտոր արարեալ են զբնաւս տաճկունս և փախեալ ի մեծ սղնախն. վասն այսորիկ վեց փաշայ թային եղեալ է գնալ ի վերայ նոցա։* (*Հ. Միքայէլ վ. Սեբաստացի առ Միխիթար Աբրահայր.* 1726 *Յունիս* 1, *Կոստանդնուպոլիս*)։

Է.

Եւս ընդ վերապատուեցելւոյ Տէր Յակոբին առաքեաց զերագոյն Հայրութեան ձերոյ (Ստեփանոս վ.ն ՅԱվիկոնեայ) 60 *հատ սրբոյ Լուսաւորչայ միտալ. ևս մին հատ արծաթեայ։* (*Պաղտասար քահանայ Տիգրանակերտեան առ Միխիթար Աբրահայր.* 1724 *Հռովմ.* 21 *Յունուար*)։

Ը.

Եւս բազում խռովութիւն գոյ այս ոլեսս, բնաւ ստոյգ զրոյց չգայ Կոստանդինուպօլսէ, մինչև ի Բաբիլոն Ճապախանայ և ասքառ կրուի միշտ թէ ծովով և թէ ցամաքով. ծովով նավքն կու

1. Ահմէտ Գ.ի կայսրութեան ժամանակն է։